յալ հարցը: Հայտնի յե, վոր յուրաքանչյուր կոտպե-
քատիվ գործում և վոչ միայն իր միջոցներով, այլ և
ոտար միջոցներով: Ոտար միջոցները ամեն րոպե կա-
քող են դուրս տարվել կոտպերատիվից: Ուստի պետք և
ամեն կերպ աշխատել, վորպեսզի ոտար միջոցները
դանվեն շրջանառության մեջ, վորպեսզի նրանք չպա-
ղպակցվեն այնպիսի արժեքների մեջ, վորոնց դժվար և
հարկավոր մոմենտում դրամի վերածել: Նույնիսկ սե-
փական միջոցներն ամբողջովին չի կարելի դնել այնպի-
սի արժեքների մեջ, վորոնք մնում են անշարժ միճա-
կում, ինչպես, որինակ, դուրքը, փայերը գանադան
հիմնարկներում և այլն: Այս բոլորի հարկավոր և աշա-
քուրջ հետևել: Այս հարցերը հարգիտանում են ավելի
բուրջ կոտպերատիվի ֆինանսական գործունեյության
մեջ: Առևտրա-ֆինանսական սեկցիան պետք և ուսում-
նասիրի կոտպերատիվի դրությունը միջոցների տե-

ղավորման ասպարեզում, չգուշացնի վտանգներից, նը-
չի առողջացման ճանապարհները:

Կարճ ատեմ, հիշյալ բոլոր հարցերը պետք և ծա-
ռայեն սեկցիային, վորպես մանրակրկիտ ուսումնասի-
րության և դիտողության առարկաներ, և ուսումնասի-
րելով սեկցիան պետք և առաջադրի միջոցներ աշխա-
տանքը լավացնելու համար:

Այս աշխատանքի վոչ մի կողմը, ավելի կամ պա-
կաս լուրջ բնույթ կրող վոչ մի հարց չը պետք և անց-
նեն առանց սեկցիայի, ըստ վորում սեկցիայի անդամ-
ները վոչ միայն քննում ու մշակում են հրահանգների
մեջ հիշված հարցերն, այլ և մասնակցում են նրանց
կյանքի մեջ կիրառելու գործնական աշխատանքներին:

Այսպիսով լիազորական սեկցիաները հանդիսանում
են վոչ միայն կոտպերատիվին նրա աշխատանքի մեջ
աջակցող մարմին, այլ և, միաժամանակ, նրանք իրեն-
ցից ներկայացնում են վոպես յուրահատուկ գործնական
գպրոց, ուր լիազորները անմիջապես մասնակցելով
մշակման և իրականացման գործնական աշխատանքնե-
րին, սովորում են հասկանալ ու ըմբռնել կոտպերացիա-
յին վերաբերող հարցերը:

Լիազորական սեկցիաները հնարավորություն են
աալիս լիազորին կոտպերատիվի աշխատանքի նկատ-
մամբ մշտապես լինել կաշրտի մեջ, դնել այդ գործի
մեջ իր առօրյա կյանքի փորձը, վոր կուտակվում և
անշուշտ լիազորների մեջ անդամների մասսայի հետ
չարունակ շփվելու հետևանքով:

Այն բոլորը, ինչ լիազորն իմանում և սեկցիայում
տարած իր աշխատանքի ընթացքում, այդ նա տալիս և
անդամների մասսային, և ընդհակառակը, այն բոլորը,

ինչ լիազորն իմանում ե անդամները հետ ունեցած անմիջական շփման հետևանքով, — նա տալիս ե սեկցիային, իսկ աղբակալից ել վարչութեանը: Այսպիսով ստացվում ե մշտական կենդանի կապ կոոպերատիվի ե նրա անդամները մեջ, իսկ սրանով իրականանում ե յուրաքանչյուր կոոպերատիվի հիմնական նպատակը — իր աշխատանքը կառուցել լայն հասարակայնութեան, անդամների լայն ինքնազործունեյութեան հիմքերի վրա:

Մենք կանգ չենք առնի սեկցիայի աշխատանքի կազմակերպչական մասը հարցերի վրա, ինչպես, որինակ, սեկցիաները շուտ-շուտ են հավաքվում, ով ե հրավիրում, ինչպես են հաշիվ տալիս ե այլն: Այս բոլորը հայտնի յեն վերջում բերված որինակելի հրահանգներին:

Մենք կուղեցինք մի քանի կենդանի, կյանքից վերցրած, որինակներով ցույց տալ, թե ինչպես լիազորների յեռանդուն աշխատանքը կարող ե տալ դրական արդյունքներ:

Որինակ, Սվեդլովսկում շնորհիվ լիազորները բյուրոյի ակտիվ աշխատանքի, մշակված են այսպիսի հարցեր, մսի նոր տեսակավորումն, սպորանքների նախորդ կշռումը ե այլն: Լիազորների մասնակցութեամբ բացված են նոր ձեռնարկութեաններ ե անց ե կացված փայտի պատրաստման կամպանիա: Լիազորներն այնտեղ ակտիվ մասնակցութեան են ցույց տալի: փայտի դանձման ե գնումների պարզեցումն աշխատանքներին:

Վիկտուսկո բանկոպում կազմակերպան իր գլխավոր ուղղութեանը դարձրեց նոր անդամներ ձեռք բերելու ե փայտվճարները դանձելու հարցի վրա:

Այս ուղղութեամբ տարված կարճ ժամանակյա աշխատանքից հետո, — 1927 թ. դարնան ձեռք եր բերված 471 անդամ ե գանձված եր 3771 ռ. փայլ:

Առևտրական սեկցիան նույն բանկոպում այժմ իր աշխատանքը կենտրոնացրել ե գլխավորապես փայտակերի կանոնավոր մատակարարման ե սակավաքանակ սպորանքների բաշխման խնդիրները վրա: Յեվ այս նրկատմամբ ունեցել են շուշափելի արդյունք:

Վատ չեն աշխատում սեկցիաները նաև Իժմելսկո բանկոպում, ուր առևտրական սեկցիան այժմ խիստ զբաղված ե առևտրի բացիտնաբացման խնդիրներով:

Կալ ե դրված աշխատանքը Պենգայում: Այնտեղ 260 լիազորներից ակտիվ աշխատել են 3 սեկցիաներում (առևտրա-Ֆինանսական, արտադրողական ե կոոպերատիվ-լուսավորութեան) 205 ե 55 մարդ ել փայտակերի ինքնազործունեյութեան այլ մարմիններից, վորոնց թվում 121 (համարյա կեսը) կանայք:

Մինչդեռ կուլերսկոյո բանկոպում միանմամայն հակառակ դրութեան ե: Լիազորները այնտեղ հավաքվում են շատ պատահական կերպով, իսկ 3 տարվա բնթացքում, լիազորական ժողովներում, չի արտահայտվել ե վոչ մի կին:

Այսպիսի որինակներ կարելի յե շատ բերել, բայց նրանք բոլորը ստացուցում են մի բան, այն, վոր լիազորների յեռանդուն աշխատանքն ամբողջութեամբ ե կոոպերատիվն իր ամբողջութեամբ, վորպես հասարակական-տնտեսական կազմակերպութեան:

Նախ քան վերջացնելը, մեզ անհրաժեշտ ե յուսաբանել իլի մեկ հարց: Սովորաբար, յուրաքանչյուր ձեռնարկութեան մեջ, յուրաքանչյուր շատ ու քիչ մեծ

հիմնարկութեան ներսում լինում են մի քանի լիազոր-
ւներ: Վրչ բոլոր լիազորները կարող են իրենց ձեռնար-
կութեան մեջ տանել ամենորոյա կոոպերատիվ աշխա-
տանք, մանավանդ այն տեղերում, ուր գոյութիւն ու-
նեն մի քանի համքարութիւններ, կամ առանձին, ար-
հեստանոցներ և կամ բաժիններ: Իսկ աշխատանք տա-
նելը հարկավոր է: Աշխատանքը շատ է: Յեւ ահա,
փորպեսզի աշխատանքը տարվի կանոնավոր և փորպես-
զի աշխատանքին լծվի ամբողջ ակտիվը, տվյալ ձեռ-
նարկութեան կամ տվյալ համքարութեան մեջ աշխատող
լիազորները միջին անհրաժեշտ ե ընտրել, այսպես կոչ-
ված, կոոպկազմակերպող: Այնտեղ, ուր գոյութիւն
ունի ընդամենը մեկ լիազոր, նա յեւ հանդիսանում է
կոոպկազմակերպողը:

Այդ կոոպկազմակերպողը, առաջինը, կազմակեր-
պում է ամբողջ աշխատանքը ձեռնարկութեան ներսում,
նա հաստատում է կապ վարչութեան և տեղկումի մեջ,
նա բաժանում է աշխատանքը մյուս լիազորների մեջ,
և յերկրորդ, հաշվի յե առնում բոլոր աշխատանքը,
ժամանակին հետևում է նրա կատարմանը, կազմակեր-
պում է լիազորների հաշվետվութիւնը փոյատեքերի
համար և ընդհանրապես համախմբում է ակտիվի աճ-
բողջ աշխատանքը:

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր աշխատանքի
դեկավարութիւնը, թե կոոպկազմակերպողների և թե
բոլոր լիազորների նկատմամբ, տանում է կոոպերատի-
վ վարչութիւնը, հանձնիս կազմակերպչական բաժնի:

Մ. ԼԻԱԶՈՐՆ ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ ՊԱՏՐԱՍՏՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԵԼՈՒ

Միանգամայն հասկանալի յե, վոր շատ լիազորնե-
րի առաջին անգամն է առիթ լինում գործ ունենալ վե-
րը շոշափած հարցերի մի մասի հետ:

Չարմանալի չը պիտի լինի, յեթե դադդայայի բան-
վորը, վորը, չը նայած իր անկեղծ ցանկութեանը ող-
նել կոոպերատիվին նրա աշխատանքի մեջ, լավ չըմ-
բունի այնպիսի բարդ հարցեր, ինչպիսիք են, որինակ,
հաշվեհառումն ու հաշվետվութիւնը կոոպերատիվում,
կամ ապրանքների գնահատումը և այլ նման հարցեր:

Այս հարցերը, կրկնում ենք, բավականին բարդ են
և դրանց մեկին ըմբունել, առանց փոքր ի շատե պատ-
բատման, շատ դժվար է:

Հետեապես հարց է ծագում, տալ լիազորին հաս-
բավորութիւն, թեկուզ ընդհանուր գծերով, նախորդ
ծանոթանալու մի քանի խնդիրների հետ, վորպեսզի հե-
տագայում գործնական աշխատանքի մեջ ուժ տա ու
խորացնի իր գիտութիւնը և կարողանա մոտենալ այս
հարցերի լուծմանը:

Ամենից առաջ լիազորին ոգնութեան է դալիս կոոպե-
րատիվ խմբակը: Կոոպերատիվ խմբակում լիազորը,
ինչպես և կոոպերատիվ շարքային անգամը, կստանա
պատասխան իրեն հետաքրքրող շատ հարցերի:

Խմբակի աշխատանքի ձեւը սահմանափակ գիտու-
թիւն ունեցող մարդկանց համար հանդիսանում է մի-

անդամայն պարզ ու մատչելի և լիազորի մասնակցութեանը կոտպերատիվ խմբակում պետք է համարել ցանկալի ձև, վորով նախնական պատրաստումից անցնելու յե գործնական աշխատանքի կոտպերատիվում:

Լիազորների գիտեցածը լրացնելու համար կա և այլ միջոց, վորն առաջադրված և նաև Յերաբեկցիայի կողմից: Այդ այն է, վոր լիազորների համար կազմակերպվում և անց և կացվում հատուկ զրույցների շարքան:

Ի հարկե, այսպիսի կուրս անցնելու համար հարկավոր են ուժեր, կամ արդյոք տվյալ կոտպերատիվում մարդիկ, վորոնք կարող կլինեն բավականաչափ լուրջ և հասկանալի ձևով անցնել այդ զրույցները: Բայց պետք է ընդունել, վոր խոշոր բանկոտպներում, ուր կան հրահանգիչներ, այդպիսի զրույցներ կազմակերպելը դժվարութունները չեն հանդիպի:

Ահա որինակելի ցուցակ այն զրույցների, վորոնց պիտի անցնել լիազորներին հետ, և վորոնց համար պետք է հատկացնել ժամեր:

- | | | | | |
|--|---|--------|---|-----|
| 1. Սպառողական կոտպերացիայի հերթական խնդիրները | 1 | զրույց | 2 | ժամ |
| 2. Բանկոտպի առևտրական գործունեությունը | 2 | » | 4 | » |
| 3. Բանկոտպի ֆինանսները | 2 | » | 4 | » |
| 4. Բանկոտպի կազմակերպչական և լուսավորութիան գործունեությունը | 2 | » | 4 | » |
| 5. Բանկոտպի կառավարումն ու հսկողությունը | 1 | » | 2 | » |

- | | | | | |
|---|---|--------|---|-----|
| 6. Սպառողական կոտպերաց. կառուցումը | 1 | զրույց | 2 | ժամ |
| 7. Լիազորների աշխատանքի կարգն ու բովանդակությունը | 1 | » | 2 | » |
| 8. Հասկացողություն հաշվետվածան ու հաշվետվութիան մասին | 1 | » | 2 | » |
| 9. Քննումը հաշվետվութիան նյութերի | 3 | » | 6 | » |

Այսպիսով ստացվում է 14 զրույց, յուրաքանչյուրը 2 ժամ, ընդամենը 28 ժամ:

Յեթև շարաթը կարգացվի միմիայն մեկ զրույց, վորն, ի հարկե, լիազորների համար չի կարող առանձին ծանրութիւն լինել. ապա $3\frac{1}{2}$ ամսում այդ բոլոր զրույցները կարելի յե անցնել և դրանով տալ լիազորներն, թեպետ և վոչ մեծ, բայց և այնպես մի փոքր գիտելիք, վորը կը թեթևացնի նրանց հետագա աշխատանքը:

Բոլոր լիազորներին հարկավոր այս ընդհանուր զրույցները պատ, ողտավետ և անցնել նաև առանձին զրույցների շրջաններ լիազորների առանձին սեկցիաների համար: Այս անհրաժեշտ է վորպեսզի նրանց մեջ կարելի լինի խորացնել այն հարցերը, վորոնք հանդիսանալու յեն նրանց անմիջական գործունեությունն առարկան: Զրույցների այս շրջանները կարելի յե կազմել հետևյալ ծրագրով:

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՍԵԿՅՈՒՅՅԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԼԻԱ-
ԶՈՐՆԵՐԻ ՀՍՄՍՐ

14 գրույց 2-ական ժամ

1. Բանկոտայի կանոնադրութեան հիմ-
նական մոմենտները 1 գրույց
2. Բանկոտայի ասպարատի կառուց-
վածքը 1 »
3. Բանկոտայի կազմութեան խնդիրներն
ու աշխատանքը 2 »
3. Կոոպերատիվ ակտիվի կազմակեր-
պումը 2 »
5. Կոոպերացման մեթոդները բանկո-
պում 1 »
6. Փայլովճարի դանձման մեթոդը . . . 1 »
7. Կոոպերատիվի դործնական աշխա-
տանքի մեջ մասսային քաշելու մե-
թոդները 2 »
8. Կոոպերատիվ լուսավորութեան աշ-
խատանքի ձևերը, մեթոդները և կազ-
մակերպումը 2 »
9. Բանկոտական կոոպերացիայի կենցա-
ղային աշխատանքը 2 »

ԱՌՆՎՏՐԱՆՑԻ ԱՆՆՍՍԱԿԱՆ ՍԵԿՅՈՒՅՅԻ ԱՆԴԱՄ
ԼԻԱ-ԶՈՐՆԵՐԻ ՀՍՄՍՐ

14 գրույց 2-ական ժամ

1. Բանկոտայի կանոնադրութեան հիմ-
նական մոմենտները 1 »

2. Բանկոտայի ասպարատի կառուցվածքը 1 »
3. Բանկոտական կոոպերատիվի միջոց-
ները և նրանց ուղտադործումը . . . 2 »
4. Բանկոտայի տուտրական աշխատան-
քի հիմնական սկզբունքները 4 »
5. Առևտրա-Ֆինանսական պլան կազմե-
մելու հիմնական սկզբունքները . . . 4 »
6. Կոոպերատիվի մասնակցութունը
Միութեան առևտրական աշխատան-
քը լավացնելու խնդրում 2 »

Այստեղ հարկավոր է պարզաբանել մի շատ կարե-
վոր հանգամանք: Այն ուժերը, ժամանակը և միջոց-
ները, վոր մենք սպառելու յենք լիազորներին պատ-
րաստելու համար, բոլորովին իրեն չի արդարացնի այն
դեպքում, յեթե մենք միջոցներ ձեռք չառնենք, պա-
հելու աշխատանքի մեջ լիազորների այն հիմնական մի-
ջուկը, վորը վորպես ավելի ակտիվ տարր, ցուցադրել
և իրենը թե ուսուցման մեջ և թե աշխատանքի ժամա-
նակ: Ընտրութունների ժամանակ լիազորների
չափազանց մեծ փոփոխութունը վնասակար է:
Անցյալ ընտրական կամպանիայի ժամանակ
(1926-27 թ.), համաձայն տեղեկութունների,
96 կազմակերպութուններում լիազորական կազմերը
նորոգվել էյին ամբողջ 70%-ով: Այսպիսի յերևույթը,
լիազորների դործունյա միջուկ պատրաստելու տեսա-
կետից, չի կարելի համարել նորմալ:

VII. ԼԻԱԶՈՐՆ ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ ՀԱՇԻՎ ՏԱ ԻՐ ԸՆՏՐՈՂՆԵՐԻՆ

Մենք մի քանի անգամ ասացինք ու հայտնեցինք այն միտքը, վոր լիազորի աշխատանքի հիմնական տարրը, այդ նրա կապն է փայտերերի հետ: Փայտերը պետք է իմանա իր լիազորի աշխատանքի և իր կոոպերատիվի աշխատանքի մասին իր ամբողջութեամբ, և լիազորի պարտականութեանն է նրան պահել մշտապես կուսի մեջ: Նրա ձեռնարկութեանները կամ համաքարութեանները և հիմնարկութեանները ընդհանուր ժողովներում պետք է, յերբեմն-յերբեմն, տա համառոտ հաշիվ իր աշխատանքի և կոոպերատիվի գործերի բնահուր գրութեան մասին:

Յեթե լիազորի աշխատանքի մեջ յեղել են վրիպումներ ու թերութեաններ, կամ յեթե անդամները վորեւէ բանով անբավական են կոոպերատիվից, ապա այս կասովի ժողովում, և լիազորին հեշտ կը լինի ուղղել իր աշխատանքը:

Իայց ստանձնապես մեծ նշանակութեան և ստանում լիազորի հաշիվութեանը շրջանային նախընտրական ժողովներում: Այդ ժողովներում, փայտերերի առաջ հաշիվ են տալիս և վարչութեանը և վերստուգել հանձնաժողովը, և միանգամայն հասկանալի յե, վոր լիազորը նույնպես պետք է աշտեղ հաշիվ տա այն բոլորի մասին, թե ինքը ինչ է արել իր գործունեութեանը ընթացքում:

Այդ հաշիվութեանները պետք է լինեն հնարավորութեան չափով լրիվ և կանոնավոր, վորպեսզի փայտերերը կարողանան իմանալ ու դատել այն մասին, թե իրենց ընտրած լիազորը ինչ չափով և կատարել իր առաջ դրված խնդիրները, ինչպես և պաշտպանել իրենց շահերը. ինչպես և ողնել և ինչ մասնակցութեան և ունեցել կոոպերատիվի գործերի մեջ և ինչ արդյունք և ստացվել նրա կատարած բոլոր աշխատանքից:

Յաճում բերված կոոպերատիվի լիազորի հաշիվատու ղեկուցման որինակելի սխեման հնարավորութեան կը տա լիազորներին ի մի համախմբել և կանոնավոր պատվերել այն բոլոր տեղեկութեաններ, վոր նրանց մոտ կան և վորոշ ձեռով նրանց ներկայացնել ժողովին:

Պետք է ձգտել, վորպեսզի ղեկուցման մեջ, փոխանակ ընդհանուր խոսքերի, վորքան կարելի յե շատ լինեն ստուգված փաստեր և որինակներ, ըստ վորում հարկավոր է յուսարանել իր և ամբողջ կոոպերատիվի աշխատանքի վոչ միայն լավ, այլ և վատ կողմերը:

ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ԼԻԱԶՈՐՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՑ-ՄԱՆ ՍՈՒՄՄԱՆ*

Ընդհանուր տեղեկութեաններ

1. Հաշիվատու շրջանում կոոպերատիվի քանի լիազորական ժողով է գումարվել և ինչպիսի հարցեր են նրանցում քննվել:

*) Իերված սխեման մի քանի փոփոխութեաններով վերցված է ՄՍՊՈ ժողովածուից, հրատարակված 1926-27 թ. նախընտրական կամպանիայի առթիվ:

2. Վս^ր ժողովներին և ներկա յեղևլ լիազորը :

3. Ի^{նչ}ով և արտահայտվել լիազորի մասնակցությունը այդ ժողովներում :

4. Լիազորական ինչպիսի սեկցիաներ են գործել կոպերատիվում և գրանցից վորի մեջ և աշխատել լիազորը :

Ի^{նչ}ՉՊԻՄԻ ԱՇԽԱՏԱՆԻ ԵՆ ԿՍՏԱՐԵԼ ՍԵԿՅԻԱՆԵՐԸ

1. Կազմակերպչականը — ա) շրջանի տնտեսական ուսումնասիրության միջոցները, բ) փայտաերերի նյութական շահագրգռությունը բարձրացնելու միջոցները, գ) փայտաերերի կարիքների ուսումնասիրությունը և այդ կարիքները բավարարելու միջոցները, դ) կատարումը՝ կոպերացման խնդրի, կոպերատիվ-լուսավորության աշխատանքի, փայտի դանձման և այլ հարցերի, յե) բանկոպի ապարատի բացիռնալացման միջոցները :

2. Առևտրականը — ա) գների հետադոտումը կոպերատիվում և շուկայում, բ) միջոցներ գների իջեցման խնդրում, գ) միջոցներ կոպերատիվի գրամագլուխները մեծացնելու և վարկերը նպատակահարմար կերպով ոգտագործելու հարցում, դ) գործունեությունը խանութներում՝ աշխատանքը կանոնավորելու և նրանց փայտաերերին հարկավոր տեսակի ապրանքներ հասցնելու համար, յե) պայքարի միջոցներն ապրանքի վորակի համար, գ) պայքարի միջոցներ մեծ ծախքերի հանդեպ և խնայողության ընթիմ կիրառելու համար :

Արտադրողականը — ա) աշխատանք՝ կոպերատիվի ձեռնարկությունների միջոցների վորակը բարձրաց-

նելու համար, բ) ծառայողների կարողության ստուգումը, գ) միջոցներ ձեռնարկություններում ծախքերը պակասեցնելու և արտադրողականությունը բարձրացնելու համար :

4. Վերստուգիչ-վերահսկչականը — ա) հետադոտություն կոպերատիվի ձեռնարկություններին, բ) լավացումը հաշվետվության դրվածքի և հսկողության ձևերի, գ) պայքարի միջոցներ կողոպուտների, վանումների և այլ շարաչահությունների դեմ :

(Անհրաժեշտ է բերել կոնկրետ որինակներ սեկցիաների կողմից այս միջոցները կիրառելու մասին) :

ԿԱՊ ՓԱՅԱՏԵՐԵՐԻ ՀԵՏ

1. Տվյալ ժամանակամիջոցում ի^{նչ}պիսի հայտարարութուններ են ստացվել փայտաերերից .

- ա) ապրանքների գները մասին (ինչպիսի),
- բ) ապրանքների վորակի մասին (որինակ),
- գ) վոչ արտադրողական ծախքերի մասին,
- դ) ապրանքների վատ պահելու մասին,
- յե) գնումների համար պարզ և ստանալու մասին,
- զ) գործադատարների կողմից վերաբերմունքի մասին և այլն :

(Անհրաժեշտ է բերել ճիշտ փաստեր և որինակներ) :

2. Ի^{նչ} է արել լիազորն այդ հայտարարությունների նկատմամբ :

3. Ի^{նչ}ումն է արտահայտվել կապը խանութային հանձնաժողովների հետ :

ՓՈՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՅԵՎ
ՎԵՐՍՏՈՒԳԻԶ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԵՏ .

1. Ի՞նչ միջոցներ ե ձեռք առել վարչությունը հայ-տարարությունների մեջ մասնանշված թերությունները վերացնելու համար և աշխատանքը լավացնելու նկատմամբ լիազորների առաջադրած միջոցները գործադրելու համար :

2. Ի՞նչումն և արտահայտվել վարչության ղեկավարությունը և ոգնությունը գործի մեջ :

3. Վարչությունն ի՞նչ ձևով եր ծանոթացնում գործի դրության հետ (ղեկուցում սեկցիաներում , առումն ինֆորմացիոն նամակների , հաղորդումներ հրահանգիչների միջոցով և այլն) :

4. Ի՞նչ և արված վերստուգվիչ հանձնաժողովի կողմից հրապարակ հանելու և տեղն ու տեղ վերջ տալու լիազորների հայտարարություններում մասնանշված չարաչահությունները :

5. Մասնակցել և արդյո՞ք լիազորը վարչության և վերստուգվիչ հանձնաժողովի նիստերին և ի՞նչպիսի հարցերի քննության ժամանակ :

6. Ընտրովի մարմինների կողմից ի՞նչպես և յին կտտարվում լիազորական ժողովների վերջումները :

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿՈՈՊԵՐԱՅՄԱՆ ՅԵՎ ՓԱՅԵՐԻ
ԳԱՆՉՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ .

1. Հաշվառման ենթարկում և արդյո՞ք լիազորը կոոպերատիվի անդամներին և նրանց փայտածարները :

2. Կոոպերատիվը քա՞նի անդամ ունի ձեռնարկություններում (վո՞ր տոկոսն են կազմում բանվորների ու ծառայողների ընդհանուր թվի) :

3. Վո՞րքան և փայտերի պարաքը , կա՞ն արդյոք յերկրորդ փայ մուծողներ :

4. Լիազորն ի՞նչպիսի միջոցներ և ձեռք առել փայտերի պարաքը լիկվիդացիայի յենթարկելու համար :

5. Ի՞նչ արդյունք և ունեցել (համեմատել փայտերի մուտքն անցյալ տարվա մուտքի հետ) :

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ-ԼՈՒՍԱ-
ՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ .

1. Ի՞նչպիսի միջոցների գործադրության մեջ մասնակցություն և ունեցել լիազորը (դասախոսությունների կազմակերպումը ձեռնարկություններում , խմբակների կազմակերպումը և հակողություն նրանց աշխատանքների վրա , կազմակերպումն ազխո դատերի , հարց ու պատասխանների յերեկոների , կինոների և այլն) :

ՏԵՂԱԿԱՆ ՊՐՈՑԵՍԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ
ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ .

1. Մտցված և արդյոք տեղկումի աշխատանքի պրլանի մեջ կոոպերատիվ աշխատանքը :

2. Լիազորի , խանութային հանձնաժողովի կամ կոոպերատիվի վարչության կողմից գրվել կա՞ն արդյոք ղեկուցումներ տեղկումի նիստերում և կամ բանվորների ու ծառայողների ընդհանուր ժողովներում :

ՈՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՅԵՎ
ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՊՊԵՐԱՏԻՎ-ԼԵԱԶՈՐՆԵՐԻ ՍԵԿՑԻԱ-
ՆԵՐԻ ՇԱՄԱՐ

Հաստատված է Յերաբոսկեցիայի նախա-
գահության կողմից. 6 փետր. 1926 թ.
Հաստատվում է կոոպերատիվի լիազո-
րական փողովի կողմից:

1. Լիազորներին և անձնափոխանորդներին կոոպե-
րատիվի գործնական աշխատանքի մեջ քաշելու համար
ստեղծվում են լիազորական սեկցիաներ համաձայն նրա
գործունեյության տարրեր ճյուղերի:

2. Սեկցիաներն իրենց նպատակ են դնում աջակցել
վարչությանը և վերստուգել հանձնաժողովին կոոպե-
րատիվի աշխատանքները կատարելագործելու և նրա-
նում գոյություն ունեցող թերությունները հեռացնելու
գործում:

3. Սեկցիաները հանդիսանում են խորհրդակցող
մարմիններ և կազադրություններ անելու ֆունկցիա-
նեք նրանք չունեն:

4. Լիազորները գրվում են սեկցիաներում իրենց
ընտրությամբ: Վորպեսզի սեկցիաները կարողանան
գործել, անհրաժեշտ է վոր նրանց գրվեն 10-ից վոչ պա-
կաս լիազորներ և անձնափոխանորդներ: Աշխատանքը
սեկցիաներում առանց վճարի չէ:

5. Ըստ իրենց աշխատանքի շրջանակների սեկցիա-
ները բաժանվում են.

Կազմակերպչական-կուլտուրականի,

Առևտրա-ֆինանսականի,

Արտադրական և հասարակական սննդի:

6. Վորոչ շրջանակի հարցեր ուսումնասիրելու և
մշակելու համար, հարցեր, վորոնք մտնում են սվյայ
սեկցիայի իրավասության տակ, վերջինը կարող է իր
կազմից գատել յենթասեկցիաներ (որինակ, կանանց և
յերիմասարդների կոոպերացման, կուլտուր-լուսա-
վորության, հասարակական սննդի և այլն):

Սեկցիաների անդամների բաժանումն ըստ յենթա-
սեկցիաների կատարվում է կամավոր հիմունքներով:

7. Սեկցիաների գործունեյության ընդհանուր
դեկավարությունը պատկանում է կոոպերատիվի վար-
չությանը, վորը հանձինս իր կազմբաժնի ուղղություն և
տալիս սեկցիաների աշխատանքներին և համաձայնեց-
նում է աշխատանքը առանձին սեկցիաների մեջ և մյուս
ինքնուրույն կազմակերպությունների հետ (խանու-
թային հանձնաժողովների, կոոպերատիվ ակտիվի ար-
տադրության մեջ և այլն):

Յուրաքանչյուր սեկցիայի աշխատանքի ներքին
ուղղությունը պատկանում է նրա նախագահությանը,
վորն աշխատանքի հիմնական տարրերը համաձայնեց-
նում է կոոպերատիվի վարչության հետ:

8. Յուրաքանչյուր սեկցիայի արտապատկանություն-
ների մեջ մտնում է.

ա) ծանոթանալը կոոպերատիվի համապատաս-
խան բաժինների և ձեռնարկությունների վիճակի և
ֆունկցիաների հետ, ուսումնասիրելը նույն բաժինների

և ձեռնարկություններն զործունեյության և աջակցելը նրանց աշխատանքներին, ծառայանալը նույնպէս վարչության, վերստուգիչ հանձնաժողովի վորոշումներին հետ, վորոնք վերաբերում են տվյալ սեկցիայի իրավասությանը :

բ) ծանոթանալը համապատասխան բաժինների ու ձեռնարկություններն աշխատանքի հետ :

գ) զեկուցումներ լսելը կոոպերատիվի այն աշխատանքի մասին, վորոնք վերաբերում են տվյալ սեկցիայի իրավասությանը և նրանց մասին վարչությանը կարծիքներ տալը :

դ) համապատասխան բաժինների և ձեռնարկությունների աշխատանքների վերաբերյալ պլանների և հիմնական հարցերի նայումը և նրանց մասին վարչությանը կարծիքներ տալը :

ե) կարծիք տալը այն հարցերի մասին, վոր կրներկայացնեն սեկցիային վարչությունը և վերստուգիչ հանձնաժողովը կարծիք իմանալու համար :

զ) Գննումն այն առաջարկությունների, վոր կրներկայացնեն առանձին անդամները սեկցիայի իրավասությանը վերաբերող հարցերի մասին :

է) Հարուցումը վարչության առաջ այն հարցերի վորոնք բղխում են սեկցիայի զործունեյությունից և վորոնք ուղղված են լինում բաժինների և ձեռնարկությունների աշխատանքը կատարելագործելու համար :

ը) Մշակումը սեկցիայի իրավասությանը յենթակա այն հարցերի, վոր վարչությունը ներկայացնելու յե լիազորական ժողովին :

Յ. Սեկցիաների աշխատանքին վերաբերող հաշվետվությունը մտցվում և կոոպերատիվի վարչության

լիազորական ժողովին ներկայացվելիք ընդհանուր հաշվետվության մեջ :

10. 2 շաբաթից վոչ ուշ, լիազորական տարեկան ժողովից հետո յուրաքանչյուր սեկցիա հրավիրվում և կոոպերատիվի վարչության կողմից ժողովի, ընտրում և մշտական նախագահություն բաղկացած նախագահից նրա տեղակալից և քարտուղարից, կազմում և մտտակա շրջանի համար զործունեյության պլան և համաձայն դրա բաժանում և աշխատանքն իր անդամների մեջ ու նշանակում պլենումի և նախագահության հրավիրման ժամկետ :

11. Պլենումի և նախագահության նիստերի համար կազմվում և արձանագրություն, վորի տակ ստորագրում են նախագահն ու քարտուղարը և հաստատվում և հաջորդ նիստում :

Արձանագրության պատճենները տրվում են վարչությանը և համապատասխան բաժինը : Սեկցիաների արձանագրությունները կազմբաժնի կողմից զեկուցվում են վարչության նիստերին :

12. Սեկցիայի պլենումի հեղթական նիստերը հրավիրում և նախագահը վոչ պակաս ամիսը մեկ անգամից : Արտակարգ նիստերը հրավիրվում են սեկցիայի նախագահության վորոշմամբ կամ նրա անդամների վոչ պակաս մի յերրորդի պահանջմամբ, նույնպէս կոոպերատիվի վարչության և վերստուգիչ հանձնաժողովի պահանջմամբ :

Նախագահության նիստերը տեղի յեն ունենում ամեն շաբաթ նախորդ վորոշված ճիշտ որին :

Հարկ յեղած զեպքում կազմբաժնի կողմից կարող և հրավիրվել սեկցիաների նախագահությունների միացյալ նիստեր :

13. Պլենումի նիստերը համարվում են կայացած, թե՛ ներկա յեն ստորագրված անդամների մի յերրորդից վոչ պակասը: Յեթե ներկաների թիվն անբավարար է, ապա կարելի յե հրափրել մոտ ժամանակում յերկրորդ նիստ, վորը կհամարվի կայացած, վորքան ել թիչ լինի ներկաների քանակը:

Նախագահությանը վերապահված է իրավունք հանելու սեկցիայի անդամների ցուցակից, նրանց, վորոնք առանց արգարացուցիչ բացատրության բացակայում են անընդհատ 3 նիստերի: Դուրս արված անդամների ցուցակը ներկայացվում է լիազորական հերթական ժողովին: Կվորումը հաշվվում է ցուցակի մեջ մնացած անդամների թվից:

14. Սեկցիայի անդամներն իրենց հանձնարարված աշխատանքի համար հաշիվ են տալիս նախագահությանը և վերջինիս ցուցմունքով նաև պլենումին: Այդպիսի հաշվետվության առթիվ ընդունված վորումները մտցվում են արձանագրության մեջ հանդերձ հաշվետվության համառոտ բովանդակությամբ:

15. Սեկցիան կարող է իր աշխատանքի մեջ քաշել մասնակցել ցանկացող կոոպերատիվի դործունյա աշխատակիցներին, պրակտիկանդներին, կոոպերատիվ պատընթացքների ու խմբակների ուսանողներին, ակտիվ փուլատերերին և այլն:

Սեկցիայի աշխատանքներին մասնակցող այլ բարր անձինք սեկցիայի նիստերում ոգտվում են իր ռըրդակցական ձայնով:

16. Յուրաքանչյուր սեկցիա ոգտագործում է համապատասխան բաժնի տեխնիկական ապարատը:

17. Ներկա կանոնագրությունը, ինչպես և յուրաքանչյուր սեկցիայի համապատասխան հրահանգը հաստատվում են լիազորական ժողովի կողմից:

ՈՐԻՆԱԿԵԼԻ ՇՐԱՀԱՆԳ ԼԻԱԶՈՐՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊ- ՉԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՅԻՆ

Հաստատված Յերարսեկցիայի նախա-
գահության կողմից, 2 ապրիլի, 1927 թ.

Ի զարգացումն լիազորական սեկցիաներին վերա-
բերող ընդհանուր կանոնների, վոր նախատեսված է
Յերարսեկցիայի նախագահության կողմից 1926 թ. հու-
լիսի 6-ին հաստատված որինակելի կանոնադրությամբ,
կազմակերպչական սեկցիայի աշխատանքները կարգն
ու բովանդակությունը պետք է արտահայտվի հետևյա-
լում.

1. Կազմակերպչական սեկցիան ընտրվում է լիա-
զորների ընդհանուր մարմնի կողմից մասնակցելու կա-
մալոր հիմունքներով և հանդիսանում է կազմբաժնին
կից խորհրդակցական մարմին:

2. Սեկցիայի աշխատանքն ամբողջովին և նրա ա-
ռանձին անդամները աշխատանքը տարվում է համաձայն
բանկոտպի կազմակերպչական աշխատանքի ընդհանուր
պլանի:

3. Սեկցիայի գործունեությունը ընդհանուր ղեկա-
վարությունը պատկանում է կոոպերատիվի կազմբա-
նին, իսկ սեկցիայի աշխատանքի ներքին ուղղությունը
պատկանում է սեկցիայի նախագահությանը, վորը
կազմվում է սեկցիայի անդամների ընդհանուր ժողովի
կողմից բաղկացած յերեք անդամից, նախագահու-
թյամբ վարչության անդամ՝ կազմբաժնի վարիչի:

4. Սեկցիայի ժողովները տեղի յեն ունենում կա-
նոնավոր ամիսը մեկ անգամ սեկցիայի սահմանած
ժամկետներին: Ժողովի հրավիրման կարգն ու ձևը վո-
րչում է կազմբաժնի, սեկցիայի նախագահության
հետ միասին:

5. Սեկցիայի ժողովների քննության և մշակման
յենթակա հարցերի շարքի մեջ մտնում են.

1. Պարբերական քննումը կազմբաժնի, նրա կա-
տարած աշխատանքի վերաբերյալ հաշվետվություն-
ների և նրանց մասին յեղրակացություն հանելը:

2. Քննումն ու մշակումը կազմբաժնի աշխատանքի
պլանների:

3. Յեղրակացություն հանել այն հարցերի մասին,
վոր վարչությունը կամ վերստուգիչ հանձնաժողովը
կներկայացնեն սեկցիային նրա կարծիքն իմանալու
համար, մասնավորապես վերստուգիչ հանձնաժողովի՝
կազմբաժնի աշխատանքների առանձին մասերի վերս-
տուգման վերաբերյալ կարծիքների ու առաջարկու-
թյունների մասին:

4. Քննումն ու մշակումը բանկոտպի կազմակերպ-
չական պրակտիկայից վերցրած առանձին հարցերի, ու-
րինակ.

ա) բանկոտպի գործունեությունը շրջանի տնտեսա-
կան ուսումնասիրություն վերաբերյալ ձևերն ու մի-
ջոցները.

բ) բանկոտպի առևտրական ցանցի բացիոնայա-
ցումը.

գ) շրջանի շկոոպերացված ազգաբնակչությանը,
մասնավորապես կանանց և յերկտասարգությանը կոո-
պերատիվի անդամների շարքերը քաշելու ձևերն ու
մեթոդները.

դ) անդամների ակտիվ կազմակերպելու ձևերը և նրան գործնական աշխատանքի մեջ քաշելը:

յե) միջոցների գանձումն անդամներից (փայեր, ավանդներ, նպատակավոր կանխավճարներ և այլն):

զ) միջոցներ անդամների մեջ նյութական շահագրգռութուն առաջ բերելու և նրանց սպասողական կարիքները լիովին սպասարկելու համար:

ե) կոոպերատիվ լուսավորության աշխատանք փոխտերերի և կոոպերատիվի աշխատակիցների մեջ:

ը) բանկոտպի և նրա ընտրովի մարմինների հաշվառության ձևերն ու միջոցները փայտակերերի առաջ:

թ) բանկոտպի ապարտախ բացիոնություն և լուսավորման միջոցները:

ժ) առանձին կոոպերատիվ կոնսուլտանտների անդակացնելը (հաշվետու—նախընտարական, փայերի գանձման, վերացուցակազրույթ, միջադպրային կոոպերացիայի սրբ և այլն):

ի) լիազորները հերթական խողովների աշխատանքը և հրավիրելու կարգը:

6. Սեկցիայի կայացրած բոլոր փորձումների մասին կազմբաժնի սարքերաբար տեղեկացնում և փորձությանը:

Մանրություն. — կազմբաժնի աշխատանքների բոլոր շատ ու քիչ սկզբունքային հարցերի մասին մինչև փորձության քննության հանձնելը, ցանկալի չե նախորդ ունենալ կազմակերպչական սեկցիայի կարծիքը:

կազմակերպչական սեկցիայի կարծիքը ցանկալի չե ունենալ նաև փերատուգիչ հանձնաժողովի բոլոր յեզ-

րակացությունների. մասին, վոր վերաբերում են կազմբաժնի աշխատանքների առանձին մասերի վերատուգմանը:

7. կազմակերպչական սեկցիայի առանձին անդամները մասնակցում են կազմբաժնի գործնական աշխատանքներին, համաձայն նրա աշխատանքների պլանի, մասնավորապես.

ա) անդամների մեջ տանում են բացատրական և ինֆորմացիոն աշխատանք, տալով զանազան տեղեկանքներ կոոպերատիվի գործունեություն մասին, գեներալ չորվածներ և դիտողություններ տեղական մամուլի մեջ և ձեռնարկությունների պատի թերթերում և այլն:

բ) մասնակցում են ազումբներին կամ առանձին ձեռնարկություններին կից կազմակերպություններին, կոոպերատիվ խմբակներին, անկյուններին, գրադարաններին և այլն. մասնակցում են կոոպերատիվ-լուսավորության բնույթ կրող ձեռնարկություններին և նրանցում տանում են աշխատանք:

գ) ստեղծում են կապ համաձայն կազմբաժնի ցուցմունքների ստորին խավերի, արհեստակազական և կուսակազական բջիջների հետ:

8. Սեկցիայի առանձին անդամների գործունեություն մասին կազմբաժնի սարքում և հատուկ հաշիվ:

ՈՐԻՆԱԿԵԼԻ ՇՐԱՀԱՆԳ ԼԻԱԶՈՐՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԱՑԻ-
ՆԱՆՍԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՅԻՆ

Հաստատված Յերարսեկցիայի նախա-
գահության կողմից 2 ապ. 1927 թ.

Ի զարգացումն լիազորական սեկցիաներին վերաբե-
րող ընդհանուր կանոնների, վոր նախատեսնված է Յե-
րարսեկցիայի նախագահության կողմից 1926թ. հու-
լիսի 6-ին հաստատված որինակելի կանոնադրությամբ,
առևտրա-Ֆինանսական սեկցիայի աշխատանքների
կարգն ու բովանդակությունը պետք է արտահայտվի
հետևյալում:

1. Առևտրա-Ֆինանսական սեկցիան ընտրվում է
լիազորների ընդհանուր մարմնի կողմից կամավոր հի-
մունքներով և հանդիսանում է առևտրա-Ֆինանսական
բաժնին կից խորհրդակցան մարմին:

2. Ինչպես ամբողջ սեկցիայի, այնպես ել նրա
առանձին անդամների բոլոր գործնական աշխատանք-
ները ղեկավարում է վարչության կողմից ընտրված
վարչության անդամ առևտրական կամ Ֆինանսական
բաժնի վարիչը, ընդհանուր ղեկավարությամբ կազմ-
բաժնի, համաձայն վարչության կողմից հաստատված
պլանի:

3. Սեկցիայի աշխատանքի ներքին ուղղությունը
վարում է յերեք հոգուց բաղկացած նախագահությու-
նը, վորին նախագահում է վարչության անդամ առևի-
տրական կամ Ֆինանսական բաժնի վարիչը:

4. Առևտրա-Ֆինանսական սեկցիայի խորհրդակ-
ցությունները հրավիրում է կազմբաժինը առևտրական
կամ Ֆինանսական բաժնի և սեկցիայի նախագահության
հետ միասին, կանոնավոր ամիսը մեկ անգամ, սեկ-
ցիայի վորոշած ժամկետներին:

5. Սեկցիայի ժողովների քննության և մշակման
յենթակա հարցերի շարքի մեջ մտնում են.

1. Քննումը առևտրական և Ֆինանսական բաժնի-
ների անցյալ պլանային ժամանակաշրջանին վերաբե-
րող հաշվետվությունների և նրանց մասին յեզրակա-
ցության հանումը:

2. Քննումն ու մշակումը առևտրական և Ֆինան-
սական աշխատանքների պլանների, նույնպես յեկա-
մուտների և ծախքերի նախահաշիվների, վոր վերաբե-
րում են թե կոոպերատիվին ամբողջապես վերցրած և
թե նրա առանձին ձեռնարկություններին:

3. Յեզրակացությունների հանումը այն հարցերի
մասին, վոր վարչութունը կամ վերստուգիչ հանձնա-
ժողովը կներկայացնեն սեկցիայի կարծիքն իմանալու,
մասնավորապես կոոպերատիվի առևտրական կամ Ֆի-
նանսական աշխատանքի վերստուգման արդյունքների
մասին:

4. Քննումն ու մշակումը կոոպերատիվի առևտրա-
կան և Ֆինանսական աշխատանքներին վերաբերող ա-
ռանձին հարցերի, մասնավորապես.

ա) ապրանքների տեսակավորման կարգավորումը
համապատասխան փայտերերի բյուջեյի.

բ) հավելումները, ծախքերը և գները ինչպես կոո-
պերատիվում, նույնպես ել շուկայում.

դ) ապրանքների և զբոսադուրիների շրջանառութ-
վան արագությունը :

դ) ապրանքների վորակի մասին :

յե) ապրանքների գնման աղբյուրների մասին :

զ) ապրանքների պահպանումը ինչպես պահեստ-
ներում, այնպես եւ խանութներում :

ե) առևտրական աշխատակիցների կարողությունը :

ը) խանութների աշխատանքի բացիոնալ դասավոր-
ումը .

թ) սեփական և ոտար միջոցների զբուխյունը .

ժ) միջոցների անզավորումը .

ի) վարկավորման պայմաններն ու ժամկետները .

լ) անդամ-փախտերի վարկավորման պայման-
ներն ու ժամկետները .

խ) ապրանքները բնական պակասությունների նորմա-
ները .


ծ) կրոպերատիվի հաշվային աշխատանքի դրու-
թյունն ու ընթացքը :

6. Սեկցիայի բոլոր վորոշումների մասին առեկ-
արական և ֆինանսական բաժինները պարբերաբար աե-
ղեկացնում են վարչությանը :

Ծանոթություն .—Առևտրական և ֆինանսա-
կան բաժինների աշխատանքների շատ ու քիչ բու-
լոր սկզբունքային հարցերի մասին, մինչև վար-
չության քննությանը հանձնելը, ցանկալի յե նա-
խորոք ունենալ առևտրա-ֆինանսական սեկցիայի
կարծիքը :

7. Առևտրա-ֆինանսական սեկցիայի առանձին
անդամները մասնակցում են առևտրական և ֆինանսա-
կան բաժինների գործնական աշխատանքներին, համա-
ձայն վերջինների աշխատանքի պլանի՝ ընդհանուր ղե-
կավարությամբ կազմակերպչական բաժնի :

8. Առևտրա-ֆինանսական սեկցիայի առանձին ան-
դամների գործունեություն, մասին կազմբաժինը պա-
հում և հատուկ հաշիվ :



ՑԱՆԿ

Հառաջաբան	3
I Ո՞վ և բանկոտպի լիազորը	7
II Ո՞ւմ կողմից, յերբ և ի՞նչպես են ընտրվում բանկոտպի լիազորները	8
III Ո՞ւմ պետք է ընտրել լիազորներ	10
IV Լիազորների պարտականությունները	12
V Լիազորն ի՞նչպես պիտի տանի իր աշխատանքը, Վճը լավ լինի	23
VI Լիազորն ի՞նչպես պիտի պատրաստվի աշխատանքի անցնելու	41
VII Լիազորն ի՞նչպես պիտի հաշիվ տա իր ընտրողներին	46
VIII Հավելվածներ՝	
1. Որինակելի կանոնադրություն բանկոտպի լիազոր- ների սեկցիաների համար	52
2. Որինակելի հրահանգ լիազորներին կազմակերպչա- կան սեկցիային	58
3. Որինակելի հրահանգ լիազորներին առևտրա-Ֆի- նանսական սեկցիային	62

«Ազգային գրադարան



NL0203233

ԳԻՆԸ 20 ԿՈՄ.